

ՌԻԳԱՍԸ, ՆՐԱ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅՅՐԸ

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Օտար հարստահարիչների ծանր լուծը թոթափելու համար տարբեր ժողովուրդների մղած ազդային-աղատադրական շարժումները համատեղ, իրենց փոխադարձության մեջ ուսումնասիրելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, որ վերջերս մասնավորապես ընդգծվեց պատմական գիտությունների XIII միջազգային կոնգրեսում¹, վերաբերում է նաև հունա-հայկական ազգային-ազատագրական այն պայքարի առնչակցություններին, որ ծավալում էին օսմանյան լծի տակ դարեր շարունակ ճնշվող ու հարստահարվող երկու ժողովուրդները: Հին դարերից եկող հունա-հայկական կապերի պատմության մեջ այդ առնչակցությունները, թեև դեռևս համակողմանի ուսումնասիրված չեն, հետաքրքրական են ու արժեքավոր:

Պատմագիտությանը բավականաչափ հայտնի են հայ-հունական կապերի բազմաթիվ փաստեր², մասնավորապես այն համատեղ ծրագիրը, որ դեռևս XVII դ. երկրորդ կեսին մշակել ու փորձել են գործադրել հույն և հայ գործիչները՝ նպատակ ունենալով թոթափել օսմանյան լուծը³։ Աղգային-աղատադրական այդ ծրագիրը, որ հայ և մասնավոր օտար աղբյուրների հիման վրա հանգամանորեն լուսաբանել է Հ. Անասյանն իր արժեքավոր աշխատությունում, կարևոր մի նշանաձող է հունա-հայկական աղատագրական բուն պայքարի և դադափարախոսության դարավոր տարեգրության մեջ: Կանդիական պատերազմի (1645—1669) տարիներին ծնունդ առած հայ-հունական համատեղ ապստամբության ծրագիրը, ինչպես հայտնի է, նրա հեղինակների՝ նշանավոր հայ գործիչ Մահմետի Մուրադի (Շահմուրադ) և Ալեքսանդրիայի հունական պատրիարքի տեղապահ Կոզմա Պալեոլոգի ջանքերով դուրս է բերվել միջազգային ասպարեզ և բավական երկար ժամանակ (1666—1683) գտնվում էր ուշադրության կենտրոնում: Ծրագրի հիմքում ընկած էր օսմանյան տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների՝ Վայքերի և հույների համատեղ ելույթը, որին այնուհետև պետք է օգնության գային մոսկովցիները, վալաքները, եթովպացիները: Նրա իրագործումը պայմանավորված էր ժամանակի քաղաքական իրադրությամբ՝ Հայր Օտտոմանի գլխավորությամբ փայփայլող խաչակրաց արշավանքով, որտեղ գլխավոր դերը վերապահված էր պապական վստիկանին ու Ֆրանսիայի թագավորությանը: Հայերի և հույների աղատա-

1 Տե՛ս Ծ. Պ. Աղ ա յ ա ն, Բալկանները և Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի միասնությունը, ԳԱ լրագրեր, 1970, № 10, էջ 103—105:

2 Տե՛ս «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1927—1929, Ա. Ալ պ ո յ ա ճ յ ա ն, Պատմություն հայ գաղթականության, Գահիրե, հ. Ա, 1941, հ. Բ, 1955, Պ. Կ ո կ ի ն ո ս, Հունահայ գաղութի պատմությունից, Երևան, 1965, Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. 2, 1967, էջ 100—114:

3 Տե՛ս Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն, XVIII դարի աղատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 94 և հետո:

գրուելուն. այդ ծրագրի ոգեկոշողների մտահղացմամբ. հիմնականում հենվելու էր երկու գործոնի՝ օսմանյան տերության ներսում տեղի ունենալիք զինված ապստամբության և դրսից սպասվող օգնության վրա: Հակառակ սպասումների և ձեռնարկված երկարատև գործնական քայլերի, այդ ծրագիրը մնաց նրա ոգեշնչողների նեղ շրջանակներում և ըստ էության նրա իրագործման համար թե՛ օսմանյան տերության ներսում և թե՛ քրիստոնյա արևմուտքում կոնկրետ քայլ չարվեց:

Հունա-հայկական ազատագրական պայքարի այլ ծրագրերի շարքում չափազանց հետաքրքրական է X^{III} դ. վերջին Հունաստանում նախապատրաստվող հակաթուրքական ընդհանուր ապստամբության ծրագիրը, որտեղ օսմանյան լծի տակ գտնվող այլ ժողովուրդների կարգում որոշակի տեղ է հատկացվել նաև հայերին: Այդ ծրագրի հեղինակն ու ոգեշնչողը, ինչպես և նրա իրագործման համար նպատակի քայլերին դիմողը եղել է Ռիգաս Վելեստինլիսը:

Այս նոր ծրագիրը իր բուն էությանմբ, հեղափոխական-դեմոկրատական բովանդակությամբ արմատապես տարբերվում է նախորդներից և արժանի է հատուկ ուշադրության: Այն պետք է արտացոլում գտնի նաև հայ ազգային-ազատագրական պայքարի տարեգրության և հայ-հունական կապերի պատմության մեջ: Հակառակ դրան, որքան հաջողվեց պարզել, այդ ծրագիրը մեզանում դեռևս չի արժանացել պատշաճ ուշադրության:

Նախ մի քանի խոսք այդ ծրագրի հեղինակի՝ Ռիգաս Վելեստինլիսի մասին:

Ռիգասի կենսագրության ու գործունեության ամբողջական պատկերը հայրենական պատմագրության մեջ դեռևս չի տրված: Ուսումնասիրողներին չի հաջողվել ճշտել ու բացահայտել շատ փաստեր, իսկ պահանջված փաստաթղթերը տասնյակ տարիներ փականքի տակ են մնացել: Հայտնի է, որ նա ծնվել է ունեոր ընտանիքում, մոտավորապես 1757 թ., Փեսալիայի Վելեստինոն քաղաքում, որ գտնվում է հին հունական Փիրե հայտնի քաղաքից ոչ հեռու: Սովորել է նախ տեղի դպրոցում, ապա՝ Զագորայի ուսումնարանում: Կա

4 Տե՛ս նույն տեղում:

5 Ռիգասը խոշոր տեղ ունի հունական ազգային-դեմոկրատական շարժման պատմության մեջ, Հակառակ դրան նրա ծավալած պայքարին մեղադրում պատշաճ ուշադրություն չի դարձվել: Վերջին տարիներին սովետական պատմաբան Գ. Լ. Արչի իր ուսումնասիրություններում համառոտակի ուրվագծել է Ռիգասի գործունեությունը: Տարիներ առաջ (1964 թ.) մենք նամակագրական կապ ենք հաստատել Գ. Լ. Արչի հետ: Այս հոգվածում օդագործել ենք նրա հաղորդած որոշ տեղեկությունները, ինչպես նաև հրապարակի վրա գտնվող նրա ուսումնասիրությունները (տե՛ս հետագա ծանոթագրությունները): Առավել մանրամասն՝ Ռիգասի կոնկրետ գործունեության մասին տե՛ս Գ. Մ. Արշ. Ригас Велестинлис—греческий революционер-демократ, борец против османского ига «Балканский исторический сборник», вып. I, Кипшинев, 1968, стр. 7—37):

6 Ուսումնասիրողները ավստրիական արխիվներում Ռիգասին նվիրված արժեքավոր փաստաթղթերին մաս առ մաս ծանոթացել ու հրապարակ են հանել մեծ դժվարությամբ՝ 1892 թ. և 1930 թ.: Թերես մինչև հիմա էլ որոշ նյութեր մնում են փակի տակ: Կոնսպիրացիոն նպատակներով իրենց գործունեությանը վերաբերող փաստաթղթերի առավել արժեքավոր մասը Ռիգասը և նրա զինակիցները ոչնչացրել են:

7 Ռիգասն իր ծննդավայրի անունով ստացել է Վելեստինացի կամ Փիրեացի, նաև՝ Թեսալացի ազգանունը: Նորագույն հետազոտություններում նա ներկայացվում է Ռիգաս Վելեստինլիս անուն-ազգանունով: Սակայն մի շարք հրատարակություններում, օրինակ, «Литературная энциклопедия»-ի և «Большая Советская энциклопедия»-ի նախորդ հրատարակությունների մեջ, նա մտել է լուի անունով՝ «Ռիգաս (Վելեստինլիս կամ Փիրոս)»: Այդ հանրա-

մի ավանդապատում, որ վկայում է պատանի Ռիգասի ունեցած ընդհարման մասին՝ մի թուրք հարուստի հետ: Դաժան թուրքը մտրակի տակ հարկադրել է Ռիգասին դեստանավակով իրեն փոխադրել մյուս ափը: Գետանցի ժամանակ Ռիգասը ջրախնդդ է արել դաժան հարստահարիչին և տուն վերադառնալով հայտարարել ծնողներին, որ հեռանում է հայրենի վայրերից և տուն չի վերադառնա մինչև որ Հունաստանից շարտաքսվեն թուրք բռնակալները: Այնուհետև նա միացել է օտար հարստահարողների դեմ պայքարող և երբեք սուլթանական լծին չենթարկված պարտիզան լեռնականներին՝ կլեֆտներին⁸:

1774—1780 թթ. Ռիգասը եղել է Կ. Պոլսում և, ինչպես ենթադրվում է, որպես գրագիր-քարտուղար ծառայել է հայտնի ֆանարիոտներից մեկի՝ Ալեքսանդր Իպսիլանտի մոտ: Այդ ժամանակ Ալ. Իպսիլանտին Բարձրագույն Դռան պալատը թարգման էր, իսկ հետագայում նշանակվել էր Վալախիայի հոսպոդար (իշխան): 1780—1796 թթ., հավանաբար իր խնամակալի հետ, Ռիգասը գտնվում էր Բուխարեստում, որտեղից էլ անցել է Ավստրիա (Վիեննա): Նրա կյանքն ընդհատվել է քաղաքական գործունեության բուռն պահին: 1797 թ. դեկտեմբերին, Տրիեստում ձերբակալվելով, Ռիգասը վեց ամիս շարունակ տանջանքների է ենթարկվել նախ՝ Վիեննայի բանտում, ապա Բելգրադի թուրքական զնդանում: 1798 թ. հունիսի 24-ին Ռիգասը, որ մնաց անընկճելի, և նրա յոթ զինակիցները մահապատժի են ենթարկվել: Մահվանից առաջ Ռիգասը թուրքերեն հայտարարել է. «Այսպես են մեռնում (քաջերը) պալիբարները՝ ֆիդայիները. ես բավական սերմեր ցանեցի, (շուտով) կհասնի ժամը, երբ իմ ժողովուրդը (երկիրը) կհնձի (կհավաքի) քաղցր պտուղներն (իմ աշխատանքի)»⁹:

Իր կարճատև կյանքի ընթացքում Ռիգասը հեղափոխական, գաղտնի մեծ աշխատանք է ծավալել, իսկ իր գործերում և գրական երկերում զարգացրել է դեմոկրատական-արմատական հայացքներ: Դրանց շնորհիվ նա վաստակել է

դիտարանների այժմ իրագործվող հրատարակությունների բառացանկերում ևս նախատեսվում է տալ «Ռիգաս» անվանումով: Մի շարք այլ հրատարակություններում, ինչպես նաև հայ մատենագրության մեջ նա հայտնի է որպես Կոստանտին Ռիգաս (Րիգաս) կամ Ռիգաս Թեսալացի: Մենք նպատակահարմար գտանք հետևել ավանդական անվանմանը՝ Ռիգաս: Նա ինքն իրեն անվանում էր այսպես՝ «Ռիգաս Վենետիկյան Թեսալոս» (Թեսալացի): Տե՛ս Դ. Մ. Արախ, Этеристское движение в России, М., 1970, стр. 94.

⁸ Դ. Մ. Արախ, Тайное общество «Филики Этерия», М., 1965, стр. 20.

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 28 և Կառլ Մենգելսդոհն Բարթոլդու, Պատմություն Հունաստանի, երկրորդ գիրք, առաջին մաս, Վաղարշապատ, 1906, էջ 23 (հեղինակի աղգանվան ճիշտ գրությունը՝ Կ. Մենգելսդոհն-Բարթոլդի):

Հայտնաբերված մի արխիվային փաստաթուղթ հաստատում է, որ Ռիգասի միակ ցանկությունն էր «տեսնել թուրքերի արտաքսումը Հունաստանից, քանի որ գերագասում է իրեն իրրև տեր ունենալ սատանային, քան այնպիսի բռնակալի, որպիսին թուրքն է» (տե՛ս Դ. Գ. Արախ, Этеристское движение в России, стр. 115).

Ուսումնասիրողները բերում են մի վարկած, ըստ որի Բելգրադի թուրքական իշխանությունների ստացած հրամանի համաձայն Ռիգասը և նրա զինակիցները պետք է փոխադրվեին Կ. Պոլիս, որպեսզի այնտեղ մահվան դատապարտվեն: Սակայն այդ մասին հայտնի էր դարձել նույն հայրենասերներին, որոնք նախապատրաստվում էին ճանապարհին փրկել Ռիգասին և նրա զինակիցներին: Վախենալով դրանից, թուրքական իշխանությունները գաղտնի հրաման էին արձակել փոխադրելու պատրվակի տակ տեղում հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Երբ թուրքական քանադեսները փորձում էին շղթայել Ռիգասին, նա բռունցքի հարվածով տապալել է նրանցից մեկին: Թուրք դահիճները, չկարողանալով շղթայակապ անել Ռիգասին, տեղն ու տեղը զնդակահարել են:

հունական ազգային-աղատագրական շարժման նախահոր և հեղափոխական-դեմոկրատ գործչի դասին, դասվել է բալկանյան ժողովուրդների՝ թուրքական լծից ազատագրության աննկուն գաղափարախոսների շարքը: «Ռիզաս Վելիստինացին,— գրել է սովետական պատմաբան Գ. Լ. Արշը.— բացառիկ տեղ է գրավում հունական ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ: Նա մշակել է շարժման քաղաքական և գաղափարական ծրագիրը՝ նրան հաղորդելով վսու արտահայտված հեղափոխական-դեմոկրատական գունավորում»¹⁰:

Ամենից առաջ պետք է ընդգծել, որ Ռիզասը անմիջականորեն ծանոթացել և հանգամանորեն ուսումնասիրել է օսմանյան լծի տակ ընկած ժողովուրդների, այդ թվում, անշուշտ, նաև հայերի, ծանր վիճակը, ականատես է հղել այն կամայականություններին, հարստահարություններին, խոշտանգումներին, որ գործադրում էին սուլթանական իշխանությունները բռնագրաված երկրներում՝ բոլոր ալլազգիների նկատմամբ: Կ. Պոլսում նա շփումներ է ունեցել «Ուայախ» լայն զանգվածների հետ, մոտիկից տեսել է թուրքական վեզիրներին, փաշաների և հարկահավաքների վարք ու բարքը, հաղորդակից է եղել Օսմանյան կայսրության մայրաքաղաքում կենտրոնացած այլ ժողովուրդների ազատագրման մտորումներին: Վալախիայի զանազան շրջաններում, ապա և բուն Բուխարեստում, որտեղ գոյություն ունեի հայկական բազմամարդ գաղութ¹¹, նրա տպավորություններն ավելի են թանձրացել և դարձել այն հենքը, որի վրա շուտով հյուսվել են նրա քաղաքական-գաղափարական հայացքները: Հենց Ռիզասի ապրած միջավայրում և նրա ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական պայմաններում պետք է փնտրել ապագա հեղափոխական-դեմոկրատի աշխարհայացքի սաղմն, անշուշտ, չբացառելով նաև հետագայում ֆրանսիական բուրժուական հեղափոխության (1789—1794 թթ.) որոշակի ազդեցությունը: Երեսուներկուամյա Ռիզասն արդեն անցել էր քաղաքական բավական ուսանելի դպրոց. որը բնականաբար պայմանավորել է նրա աշխարհայացքի ձևավորումը նախքան 1789 թ., երբ սկսվեց ֆրանսիական մեծ հեղափոխությունը:

Հուլյն բուրժուական պատմաբանները, երբեմն նաև մարքսիստ պատմաբաններն, իրենց աշխատություններում այն թեղն են առաջադրում, որ Ռիզասի հեղափոխական աշխարհայացքը ձևավորվել է հիմնականում ֆրանսիական հեղափոխության ազդեցության տակ: Ավելին, նրանք այդ ազդեցությանն են վերագրում նաև Ռիզասի ստեղծած գաղտնի կազմակերպությունը՝ «Հետերիան», որը հունական ազգային-աղատագրական ուլայքարի առաջին կազմակերպությունը լինելով, իր գավառած գաղափարախոսությամբ և թողած ավանդներով որոշակի դեր է կատարել հետագայում ծավալված ալլազային-ուլատագրական պայքարի մեջ¹²:

10 Г. Л. Арш, Этеристское движение в России, стр. 117.

11 Հստ Մ. Բժշկյանցի՝ 1808 թ. Բուխարեստում «տունք հայոց են 120», իսկ դրանից ասաջ բրազում էին աստ հայք» (տե՛ս Ա. Արա համյան, Համառոտ ուրվագիծ հայ դպրութայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 133):

12 Տե՛ս հույն պատմաբան Տ. Վուրեսսի «Ֆիլիկի հետերիա» հոդվածը «Новая и новейшая история» ամսագրի 1964 թ. № 3-ում (էջ 34—40): Մեթոդոլոգիական ոչ ճիշտ այդ դրույթը տեղ է դրել նաև սովետական պատմաբանների որոշ ուսումնասիրություններում (տե՛ս նույն տեղում, էջ 41—63):

Ներանսիական բուրժուական հեղափոխությունից շատ տարիներ առաջ, նույնիսկ օսմանյան լուծի Հունաստանի վրա հաստատվելու սկզբնական շրջանից սկսած, հույն լեռնաբնակները՝ Պելեպոնեսում, Պինդոսում, Օլիմպիոսում, Սուլիում, Սկաֆալում և այլուր, երբեք չեն դադարեցրել պայքարը թուրքական լավթիչների դեմ։ Հունական մի շարք լեռնավայրերում՝ Օլիմպիոսում, Պաոնասում, Մանիում, Սուլիում, Ագրաֆիալում և այլն, ամրացած կլեֆտներ, պարտիզանական դարավոր և հիմնականում հաղթական պայքար են մղել թուրքական կանոնավոր զորամասերի ու փաշաների դեմ, պահպանել են իրենց անկախությունն ու կիսանկախությունը։ Գյուղացիական զինված այդ պարտիզանական պայքարը, շարունակ ծանրացող թուրքական լծի հետևանքով օսմանյան տերության մեջ ստեղծված սոցիալ-քաղաքական պայմաններն էին պարարտ հող ստեղծում աղգային-ագատագրական այն գաղափարախոսության համար, որ կազմակերպված ու հեղափոխական պայքարի էր մղում հույն Վայրենասներին, նրանց թվում նաև Ռիգասին։ Կարևոր այս հանգամանքն է, որ ամենից շատ ներգործել է Ռիգասի հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքի ձևավորման վրա։ Դրա ծնունդն են Ռիգասը և նրա գաղափարախոսությունն ամբողջությամբ վերցված։

Ռիգասն առաջին հերթին հայտնի է իր մարտակոչով՝ «Ռազմական հիմնով» և սահմանադրությամբ, որ ստացել է «Նոր քաղաքական կառավարում» խորագիրը¹³։ Դրանցում արտացոլված են Ռիգասի քաղաքական հայացքները, նրա ծրագիրը, նաև նրա վերաբերմունքը Օսմանյան կայսրության լծի տակ ընկած ժողովուրդների, նրանց շարքում նաև հայերի նկատմամբ։

Ճշգրիտ հայտնի չէ, թե երբ է Ռիգասը գրել իր հիմնը և սահմանադրությունը։ Ավելի հավանական է, որ նա դրանք հղացել ու ավարտել է դեռևս Բուխարեստում գտնվելու տարիներին՝ մինչև 1796 թ.։ Այդ թվականի սեպտեմբերին, երբ Ռիգասը Վիեննայում էր, «Ռազմական հիմնը» երգվում էր։ Նրա երաժշտության հորինողը և առաջին կատարողն ինքը՝ Ռիգասն էր։ Այդ ժամանակ էլ հիմնը տարածում է գտել նրա զինակիցների շրջանում, ապա նաև հունական գաղթավայրերում։ Նրա արտագրված օրինակները ձեռքից ձեռք էին անցնում և շուտով՝ 1797 թ. հիմնը հայտնի է դառնում նաև բուն Հունաստանում։

Վիեննայում՝ 1796—1797 թթ. Ռիգասը, գործնականում ձեռնասուլիս լինելով իր քաղաքական ծրագրի իրագործմանը, ընդհատակյա լայն գործունեություն է ծավալել։ Նա հիմնադրել է գաղտնի հեղափոխական կազմակերպություն՝ «Հետերիա» (Έταρεία, «Ընկերություն»)՝¹⁴, որի համակողմների թիվը հասել էր 28.000-ի¹⁵, ինչպես վկայում է ռուս դիվանագետ Ս. Վառուկան։ Ռիգասն անձնական ու նամակագրական կապեր է հաստատել թե՛ Վիեննայի հու-

13 Ռիգասն իր սահմանադրությունը վերնագրել է այսպես՝ «Նոր քաղաքական կառավարում Ռուսկիայի, Փոքր Ասիայի, Միջերկրածովյան կղզիների, Վալաքիայի և Մոլդավիայի ժողովուրդների համար»։

14 Գրականության մեջ, նաև հայ մամուլում և ասանձին հրատարակություններում ընդունված է «Հետերիա» ձևը։ Ռուսերեն նորագույն հետազոտություններում տերմինի գրությունը հշտվում է՝ «Этерия»։ Մենք դերազասում ենք ավանդաբար ընդունվածը՝ «Հետերիա»։

15 Ռիգասի «Հետերիա» ընկերության անդամների թիվը մեծ չէր։ Կազմակերպության մեջ հատուկ հրգմամբ ընդունվածների հիմնական ցանկը Ռիգասը և նրա զինակիցները ձեռքարկություն պահին՝ ֆրանսիական հյուրանոցի լուսամուտից ծովն են նետել։

նական մարդաշատ գաղութը և թե այլ գաղթավայրերի: Հույն հայրենասերների հետ: «Հետերիան» և նրա հիմնադիր Ռիզասը իրենց ընդհատակյա գործունեությունամբ հետապնդել են քաղաքական նպատակ՝ թուրքական լծից ազատագրել բալկանյան ժողովուրդներին, առաջին հերթին հույներին և ստեղծել անկախ պետություն: Հունական ապագա պետությունը և նրա կազմի մեջ մտնող ժողովուրդներին կառավարելու համար Ռիզասը ստեղծել է նաև իր սահմանադրությունը: Այստեղ նա ավելի համակողմանի ու պարզորոշ է շարադրել իր հայացքները ու քաղաքական սկզբունքները, հատուկ դեկլարացիայով ու հողված առ հողված մշակած (ընդամենը 159 հոդված) սահմանադրությամբ առաջարկել է նոր պետության կառավարման, մարդու և ազգերի իրավունքները իր գրույթները:

Թուրքական լուծը տապալելու և նոր պետություն հիմնադրելու համար, սակայն, բավական չէր հեղափոխական գործունեություն ծավալել հունական գաղթավայրերում: Ռիզասը օսմանյան լուծը տապալելու միակ միջոցը համարում էր զինված ապստամբությունը, որ պետք է բարձրացնեք բուն Հունաստանում գտնվող հույն ժողովուրդը՝ օսմանյան լծի տակ գտնվող մյուս ժողովուրդների հետ համատեղ ու միասնական ջանքերով: Ուստի և նա ցանկանում էր փոխադրվել բուն Հունաստան, նախապատրաստել նրա ժողովուրդների զինված ապստամբությունը: Դրանից առաջ Ռիզասը Վիեննայում հիմնադրված հունական՝ «Էֆեմերիս» թերթի խմբագրության տպարանում ընդհատակյա տպագրեց մի բրոշյուր՝ տեղավորելով իր սահմանադրությունն ու «Ռազմական հիմներ»:

Ռիզասի բրոշյուրը տպագրվել է 3000 օրինակ տպաքանակով: Իրանցիյ 2800-ը նա սնդուկներով ուղարկել է Տրիեստ՝ ինքն էլ շուտով ձանապարհվելով այնտեղ: Մատնության հետևանքով Ռիզասի սնդուկներն ընկան հաբսբուրգյան պետության ոստիկանների ձեռքը, իսկ ինքը՝ հենց Տրիեստ հասնելու օրը՝ 1797 թ. դեկտեմբերի 19-ին, ձերբակալվեց: Այդպիսով Ռիզասի բրոշյուրի գրեթե ամբողջ տպաքանակը ոչնչացվեց և միայն 200 օրինակը ձեռքից ձեռք անցնելով՝ տարածվեց: Բայց հաջորդ տարում Ռիզասի զինակից Քր. Պերևոսովերա հրատարակեց «Ռազմական հիմներ», որը և տարածվեց ամբողջ Հունաստանում, դարձավ հույն ընդհատակայիների, ապա և ազատագրական պատերազմի ելած բոլոր հայրենասերների հիմներ:

Հանգամանքների այդպիսի բերումով Ռիզասի բրոշյուրը կորստի է մատնվել: Մինչև հիմա նրա ոչ մի օրինակը չի հայտնաբերվել: Ավելին. նրա սահմանադրությունը մնացել է գրեթե անհայտ, մինչև որ 1881 թ. հայտնաբերվել է նրա մի ձեռագիր օրինակը՝ հունարեն: Նրա մի այլ պատճենը, արդեն գերմաներեն, հայտնաբերվել է ավստրիական արխիվներում (1931 թ.), Ռիզասի սահմանադրության երրորդ օրինակը հայտնաբերվել է Ռումինիայում (1962 թ.): Վերջին տարիներին սովետական պատմաբան Գ. Լ. Արշը Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (Ֆ. Գրասենյակ, գ. 13377, թ. 81—138, բնագիր) հայտնաբերել է Ռիզասի բրոշյուրի հենց տպագիր օրինակից կատարված միակ ամբողջական թարգմանությունը՝ սահմանադրությամբ ու «Ռազմական հիմնով»: 1964 թ. Գ. Լ. Արշը հրատարակել է ավելի քան 165 տարի առաջ՝ 1798 թ. ռուսերեն թարգմանված Ռիզասի բրոշյուրն՝ «առանց

որևէ փոփոխության ու հապավման¹⁶։ Այս հրապարակմամբ մեզանում առաջին անգամ հայտնի է դառնում, որ Ռիզասի ծրագրում հայերին առանձին դեր է վերադասված, որ նրա սահմանադրության և «Ռազմական հիմնի» մեջ հայերին ևս հատուկ տեղ է տրված¹⁷։

Արդ, ի՞նչ գաղափարներ և քաղաքական ծրագիր է առաջ քաշել Ռիզասը և ի՞նչ տեղ է նա հատկացրել հայերին դրանց իրագործման ասպարեզում։

Ռիզասի սահմանադրությունը նախ և առաջ քաղաքական եզակի մի դեկլարացիա է, որ ամենայն սրույթյամբ մերկացնում է սուլթանական կարգերի դաժան էությունը, բացահայտում է Թուրքիայում տիրող վայրագությունները և վճռականությամբ դատապարտում դրանք։ Նրանում Ռիզասը նախ արձանագրում է, որ բալկանյան ժողովուրդները «տնքում են օտոմանական Դուան գարշիլի բռնապետության բռնակալական շահագործման տակ», «պատուհասից և դաժան լծից ազատվելու համար ստիպված են եղել տարբեր պետություններ [երկրներ] փախչելով փրկել իրենց»։ «...Այդ բռնապետը, որ սուլթան է կոչվում, լուրորդին հանձնվել է զազրելի հեշտասիրությունների, շրջապատվել է ներքինիներով, արյունարբությունով, իր տգետ պալատականներով, մոռացել ու արհամարհում է մարդկությանը, սիրտն իր ամրապնդել է անմեղության նրկամամբ կատաղությամբ... այնպես է մեկուսացել զազրելի կամայականությունների մեջ, որ ոչ մեկը... հույս չունի ոչ իր կյանքի, ոչ պատվի, ոչ իր սեփականության վրա։ Ամեն մի հնազանդ, ամեն մի անմեղ, ամեն մի ազնիվ քաղաքացի յուրաքանչյուր պահ ենթակա է կամ նրա տանջող ցնորքների, կամ այդ բռնակալի տեղական վայրենի վերակացուների և ստոր կառավարիչների կամ, յիբջապես (որը և հաճախ է պատահում), նրա շարագործ գազանակերպ հետևորդների զոհը դառնալու վտանգին, [ներանց], որ ուրախանում են նրա [սուլթանի] դատումների անսահմանափակ դաժան անմարդկայնությամբ, սպանություններով, որոնք տեղի են ունենում առանց որևէ հետաքննության, առանց որևէ հարցաքննության և առանց որևէ դատի»¹⁸։ Այդ բոլորի ամենօրյա վկան է երկիրը, դա տեսնում է արեգակը, զգում է երկիրը, որն «անդադրում ենթոթվում է անմեղ արյան գետակներով»։

Նրկրի վրա աղատ ապրելու համար այդ ժողովուրդները, — կոչ է անում Ռիզասը, — պետք է վերցնեն վրեժխնդրության ու խիզախության զենքը, բարձրաձայն, ամբողջ աշխարհի առջև, աղաղակեն իրենց սուրբ և անքակտելի իրավունքների մասին։ Նվ որպեսզի ժողովուրդներն իմանան իրենց իրավունքները, կառավարման օրենքները, արիաբար տեսնեն բռնատիրության լծի զզվելիությունը, փարվեն փառապանծ նախնիների թանկագին ազատությանը, թույլ

¹⁶ Sıkı G. J. Ар ш, К вопросу об идейном воздействии великой французской революции на балканские народы (неизвестный текст конституции и «Военного гимна» Рипаса Велестинлиса); «Французский ежегодник», 1963, М., 1964, стр. 320—344.

Ռիզասի և նրա բրոշյուրի վերաբերյալ փաստական տեղեկություններ հիմնականում քաղված են այս հրապարակումից։

¹⁷ Նկատի ունենալով, որ մեր պատմագրության և առհասարակ մատենագրության մեջ Ռիզասի գործունեությունը գրեթե տեղ չի գտել, ինչպես և այն, որ հիշատակված հրապարակումը մեզանում դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել, մենք հնարավոր ենք համարում այստեղ քիչ թե շատ մանրամասնությամբ անդրադառնալ հունահայկական կապերի այդ ըստ էության նորահայտ էջերին։

¹⁸ «Французский ежегодник», 1963, стр. 324.

Ռուսերենից կատարած մեր թարգմանություններում թույլ ենք տվել որոշ ազատություն։

շտան, որ որևէ մեկը ստրկության բռնադատվի, իսկ կառավարողներն ու դատավորներն իմանան իրենց իսկական պարտականությունները, Ռիգասը ստեղծել է իր ծրագրած ապագա պետության սահմանադրությունը:

Ռիգասի սահմանադրությունը, ակնհայտորեն կրում է ֆրանսիական բուրժուական սահմանադրության, ավելի ճիշտ յակոբինյան առավել արմատական սահմանադրության (1893 թ.) կնիքը: Շատ հոգվածներ նա այդ սահմանադրությունից պարզապես տեղագրել է իր նոր քաղաքական կառավարման օրենսդրության մեջ: Դա, անշուշտ, ավելի է ընդգծել XVIII դարավերջի այդ կարևոր վավերագրի դեմոկրատական-հեղափոխական ոգին:

Ռիգասի սահմանադրությունը օսմանյան լծի տակ դարեր շարունակ ճընշվող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ծրագրային եզակի փաստաթուղթ է, որի բնորոշ առանձնահատկությունը նրա համաժողովրդական բնույթն է, դեմոկրատական էությունը: Նա համահավասար իրավունքներ է սահմանել բալկանյան բոլոր ժողովուրդների համար՝ անկախ նրանց ազգային պատկանելիությունից, անկախ դավանանքից: Մահմեդականներին, նրանց շարքում նաև թուրք ազգաբնակչությանը որևէ իրավական սահմանափակումով չի զանազանում հույներից և մյուս ժողովուրդներից: Բոլոր մարդիկ, ինչպես քրիստոնյաները, այնպես էլ թուրքերը բնական իրավիճակով ըստ էության հավասար են, — հռչակում է Ռիգասն իր սահմանադրության առաջին հոդվածներից մեկում:

Բավական կոնկրետ է Ռիգասը պատկերացնում տարբեր ժողովուրդների այդ թրևական իրավիճակը, նրանց թրևական իրավունքները, որ նա շարադրում է իր սահմանադրության 2-րդ հոդվածում: Դրանք հանգում են հետևյալին. «առաջինը, որ մենք բոլորս հավասար լինենք և ոչ թե մեկը մյուսից բարձր դասվի, երկրորդը, որ մենք ազատ լինենք և ոչ թե մեկը մյուսի ստրուկը դառնա, երրորդը, որ մեր կյանքն ապահովված լինի և ոչ ոք չկարողանա այն խլել մեզնից՝ ստույգամբ ու քմահաճորեն. չորրորդը, որ մեր ունեցած անասնապահությանը (իմա՝ սեփականությունը) ոչ ոք չկարողանա ձեռք տալ և որպեսզի այն մնա մերը և մեր ժառանգորդներին»:

Ռիգասը սահմանել է ժողովուրդների ազատություն, անվտանգություն, անձի և գույքի ապահովություն. օրենքը պաշտպանում է յուրաքանչյուր քաղաքացու, դատապարտում է ստրկությունն ու հարստահարությունը: Ռիգասի պետության մեջ բոլոր քաղաքացիները պետք է գրագիտություն ունենան, ներանցից յուրաքանչյուրի պաշտպանությունը բոլոր մյուսների պարտքն է: Հրամայելու և օրենքներ սահմանելու իրավունքն անբաժանելի է և պատկանում է միմիայն ժողովրդին (ազգին) և ոչ թե նրա մի որևէ մասին: Ռիգասի սահմանադրությունը, հենվելով անբաժանելի և միասնական զեմոկրատիայի վրա, հաստատում է քաղաքացիության, ընտրելու և ընտրվելու իրավունքներ, որոշում է օրենսդիր օրգաններ և ազգային ներկայացուցչություններ՝ դրանցում, սահմանում է բարձրագույն կառավարման, քաղաքական ու դատական իրավասությունների օրենքները¹⁹:

Հույների և օսմանյան լծի տակ գտնված մյուս ժողովուրդների համար սահմանված իրավունքները, նրա ամբողջ օրենսդրությունը լիովին վերաբերում է նաև հայ ժողովրդին: Հայերի մասին ուղղակի հիշատակություն կա Ռի-

¹⁹ Նույն տեղում, էջ 326—339.

դասի սահմանադրության ևրկու հատվածներում: «Ժողովրդի ինքնավարության մասին» գլխի 7-րդ հոդվածը հռչակում է.

«7. Ժողովրդի ինքնավարությունը ներկայացնում են ընդհանրապես այս պետության մեջ բոլոր ապրողները՝ հույները, բուլղարները, ալբանացիները, հայերը, թուրքերը և ամեն մի այլ ժողովուրդ՝ առանց օրենքի ու լեզվի բացառության»²⁰:

Մի այլ հատվածում, որ կրում է «Այս օրենքի երաշխավորությունն ու հաստատումը» խորագիրը, իր սահմանադրության 122-րդ հոդվածը Ռիգասն այսպես է ձևակերպել.

«122. Օրենսդիր մարմինը բոլոր հույների, թուրքերի, հայերի համար հաստատում է հավասարադրող պատիվ, ազատություն, աներերություն, իրենց ունեցվածքի նկատմամբ իշխանություն, համաժողովրդական պարտականություններ, որոնք անհրաժեշտ են ազատության, բոլոր ազգերի աստվածապաշտության իրավունքի, մի ընդհանուր դատարարականության, օրենքով սահմանված անհրաժեշտ ժողովրդական օժանդակության համար. անսահմանափակ ազատություն տպարաններին, յուրաքանչյուրի համար՝ խնդրելու և բողոքելու իրավունք, համընդհանուր հասարակության մեջ միավորվելու և, ի վերջո, ժողովրդական բոլոր իրավունքներից օգտվելու իրավունք»²¹:

Ռիգասի սահմանադրությունն, անշուշտ, կրում է իր դարաշրջանի սոցիալ-քաղաքական կնիքը: Գ. Լ. Արշը մատնանշում է, որ Ռիգասի վրա, հավանաբար, ներգործություն են ունեցել հունական վերնախավի, մասնավորապես լուրժուադիայի մեծապետական ձգտումները, թեև նրա ծրագրած «Հունական պետությունն» ընդհանուր ոչինչ չունի վաղեմի Բյուզանդական կայսրության հավանական ժառանգորդը համարվող այն «Հունական կայսրության» հետ, որը նկրտում էր ստեղծել (նաև «հելլենացման» միջոցով) հունական ունևոր դասը: Ռիգասն, այսուամենայնիվ, նախատեսում էր ստեղծել հունական պետություն: Անկախ այդ անխուսափելի ներգործությունից, նա համահավասար իրավունքներ է սահմանել բալկանյան բոլոր ժողովուրդների համար, ելել է համընդհանուր դեմոկրատական սկզբունքներից²²: Ազգային-ազատագրական շարժման իր գաղափարախոսության, հեղափոխական-դեմոկրատական իր հայացքներով նա վեր է բարձրացել իր ժամանակաշրջանից: Լինելով հունական ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության նախահայրը, նա միաժամանակ սկզբնավորել է բալկանյան ժողովուրդների, թվում է կարելի է ասել նաև նրանցից յուրաքանչյուրի, ազատագրական պայքարի դեմոկրատական սկզբունքները:

Ռիգասի մյուս կարևոր վավերագիրը, որ դարձյալ առնչվում է հայերի հետ, դա նրա ընդարձակ (126 տող) չափածո մարտակոչն է, որ դարձել է հունական ազգային-ազատագրական շարժման և օսմանյան լծի դեմ մղված երկարամյա պայքարի հիմնը: Բոցավառ բանաստեղծական խոսք լինելուց բացի «Ռադմական հիմնը», ինչպես նկատում է Գ. Լ. Արշը, «հեղափոխական մանիֆեստ է, մարտական ծրագիր՝ սուլթանական բռնապետության տապալման

²⁰ Նույն տեղում, էջ 331:

²¹ Նույն տեղում, էջ 339:

²² См. Г. Л. Арш, Этеристское движение в России, стр. 103.

համար պայքարող Օսմանյան կայսրության ժողովուրդների մարտական գործողության համար»²³:

Թերևս դժվար է հիշատակել XVIII դարավերջի մի այլ ստեղծագործություն, որ սուլթանական բռնապետության, մարդու ստրկության ու նրա իրավունքների բռնադատման դեմ տոգորված լինի այնպիսի բուռն պաթոսով, որպիսին հանդես է բերել Ռիզասն իր այս երկում: Բոցաշունչ հեղափոխականը տեսել ու արտացոլել է այն վայրագությունները, որոնց ամեն օր հավասար չափով ենթարկվում էին հույները, բուլղարները, ալբանները, հայերը, ինչպես և թուրքերը: Դրա համար էլ նա սուլթանական լուծը տապալելու պայքարում հավասար դեր է հատկացնում բոլոր ձնշված ժողովուրդներին, իր մարտակոչն ուղղում է նրանցից յուրաքանչյուրին.

Մինչև ե՛րբ. կտրիճենք. ապրենք կիրճերում.

Մեկուսացած, ինչպես առյուծները. լաճերում ու լեռներում,

Բնակվենք ֆառանավանդներում և լոկ ճյուղերին նայենք.

Դառը ստրկության պատճառով՝ խուսափենք այխաճից.

5 Կորցնենք եզրայրենիին, նայրենիք և ծնոզներին,

Մեր մտերիմներին. երեսնաներին ու հարազատներին բալը²⁴:

Օսմանյան կայսրության մեջ ոչ մեկի ապահովությունը երաշխավորված չէ: Կամայականության զոհ են դառնում նույնիսկ նրանք, ովքեր հնազանդությանը կատարում են սուլթանի կամքը: Սուլթանական կարգերի ու վրեժխնդրության հույն նահատակներին թվարկելուց հետո Ռիզասը հիշատակում է, որ քրիստոնյաներն ու մուսուլմանները հավասարապես «ամեն օր տապալկվում են կրակի վրա», ընկնում են «անարդար սրից»: Ուստի նա կոչ է անում ի մի գումարվել, հավատարմության երդում տալ և միասնական ուժերով ոտքի ելնել.

Լավ է մի ժամ ազատ ապրել,

Քան ֆառասուն տարի՝ բանտում ու ստրկության մեջ

Խճշ օգուտ ապրելուց, երբ ստույկ ես.

10 Երբ օրավառ տապալում եմ կրակի վրա:

«Ռազմական հիմնի» երկրորդը մասը կազմում է նզովք-երդումը: Այստեղ պայքարի ելած ռազմիկները բազկատարած երդվում են՝ դիմակայել թրշնամիներին ու ոչնչացնել նրանց, հավատարիմ մնալ հայրենիքին ու իրենց զորավարներին, խորտակել օսմանյան լուծը: Ռիզասի նախագծումով այդ պայքարը համընդհանուր բնույթ պետք է կրի և սուլթանական բռնապետության

²³ Նույն տեղում, էջ 95:

²⁴ Ռիզասի հիմնը՝ բնագրի հարադատությանը դեռևս չի թարգմանված հայերեն: Այստեղ և հետո բերվող քաղվածքների տողացի թարգմանությունը մեր խնդրանքով՝ սիրահոժարությանը կատարել է պատմաբան Հր. Բարթիկյանը՝ հունարենից (հմմ. Դ. Ի. Զաֆեյ, Լիդզա ΒελεΣτιηλλη, 1957, էջ 217—221. Տես նաև «Французский ежегодник», 1963, М., 1964, стр. 340—342):

Բացի Գ. Լ. Արշի նշված հրապարակումից հայտնի է նաև Ռիզասի հիմնի օտար աղբյուրներից կատարված ռուսերեն տողացի արձակ թարգմանությունը, որտեղ, սակայն, բացակայում են բնագրի 83—104-րդ տողերը, ինչպես և կրճատված են 49—50 և 73—76-րդ տողերը (տե՛ս М. И. Михайлов, Собр. соч. в пяти томах, т. 1, Чкаловское изд., 1951, стр. 611—612).

տապալուովը պետք է տեղի ունենա նրա տիրակալության տակ գտնվող բոլոր ժողովուրդների հավաքական ուժերով: Իր տեղն ու դերն այդ միասնական գոտեմարտում ունի նաև հայ ժողովուրդը:

Արևելքում ու Արևմուտքում, Հյուսիսում ու Հարավում
Միասիրա լինենք բոլորս հանուն մեր հայրենիքի:
Ամեն մեկն ազատ է դավանելու իր հավատքը:
Բայց ուզվի փառք կերտենք բոլորս միասին:
45 Բուլղարեն՝ ու այրանեն՝, հայեր, հոռոմեն՝,
Անլ՝ ու սպիտակեն՝—միահամուտ մղումով՝
Հանուն ազատության եկե՛ք սուր կապենք
Ու արիւթը մեր թո՛ղ ամենուր ընդա:

Ռիզասի հիմնն ամբողջությամբ վերցրած և նրա այս մարտաշունչ տողերն արտացոլում են հեղինակի հեղափոխական-դեմոկրատական հավատո հանգանակը՝ բանաստեղծական խտացված լեզվով: Հարևան ու բախտակից ժողովրդի մեծ գավաղը, որ առաջինն է առաջ քաշել ազատագրական պայքարում բալկանյան ժողովուրդների համագործակցության գաղափարը²⁵ ու ինքն էլ դարձել է այդ գաղափարի իրագործման առաջամարտիկն ու նահատակը, այլ ժողովուրդներին ուղղված իր կոչով իրավունք է վաստակել դասվելու նրանց, մասնավորապես և հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող անձնավեր բարեկամների շարքը:

«Ռադական հիմնը» միայն բուն Օսմանյան կայսրության մեջ ապրող ժողովուրդներին չէ ուղղված, այլ նաև նրանց այն դավակներին, որոնք դուրսվում են տարագրության մեջ, ովքեր ծառայում են օտարերկրյա բանակներում, դիտեն ուղղական գործը: Ռիզասը կոչ է անում բոլոր նրանց վերադառնալ «իրենց տեղերը», համախմբել հայրենակիցներին և հաղթել բռնակալներին:

55 Մինչև ե՛րբ դու օտար թագավորի սպա մնաս,
Արի՛ ու հեռաբանը դարձի՛ր քո ազգի.
Լա՛վ է հայրենիքի համար զոհվես
Քան հանուն օտարի բրիցդ ոսկե ծոպ կախես:

Ազատագրական սուրբ պայքարում ով աղնվորեն կորսևորի իրեն, նա կդառնա «մեր ևղբայրը», իսկ ով մեր դեմ կանգնի, թևկուղ նա չլինի մերը», աներկբա, կընկնի: Այդպես Ռիզասը բոլոր ազդեցությունների մեջ դանադանում է իրկու կարգի մարդկանց՝ սուլթանական լծի դեմ մարտնչողներին և հակառակորդներին՝ ի՛նչ ազգության էլ պատկանեն, ի՛նչ հավատ էլ դավանեն: Այս «կղբուքով էլ նա իր մարտակոչը կոնկրետ հասցեագրում է բոլոր ցեղերին, ժողովուրդներին՝ թվարկելով օսմանյան լծի տակ գտնվող համարյա նրանցից յուրաքանչյուրին, ներառյալ նաև ցամաքում ու ծովում մարտնչելու ընդունակներին, նույնիսկ Հալիպոլում տիրող փաշաներին, որոնք ևս ձգտում են անկախության, «ազատության մասին են երազում»: Սուլեյմանի, մանիտների, դանուբցիների, սեծովյան հույների, լաղերի, կիպրոսցիների, մալթացիների հետ միաժամանակ նա «վենքը ձեռքին» մարտադաշտ է հրավիրում նաև վրացիներին:

95 Դո՛ւ, գյուլչի, էլ մի քնի, ոտքի ել կռավի՛
Բռուսացուն նմանվիր, քանզի հիմք ունես:

25 S. H. «Новая и новейшая история», 1964, № 5, стр. 157.

Այդ բոլոր ցեղերն ու ժողովուրդները միահամուռ պետք է բորբոքեն աղատագրական պայքարի կրակը: Նրանց պետք է ոգեշնչեն իրենց արդարացիությունն ու նախնիների հիշատակը: Այդ դեպքում կտապալվի գազանակերպ թշնամին, որի հզոր և անպարտելի լինելու մասին կարծիքն անհիմն է. ճնրա սիրտը թփրտում է, նա ինքն էլ նապաստակ է: Ռիգասը հիշատակում է գիրցիուների (կիբչալի)²⁶ պայքարի մասին. նրանք երեք հարյուր հոգով քարդել են թնդանոթներով զինված թուրքերին: Ուստի պետք է ոտքի ելնել առանց տատանվելու:

103 Բալադ միասիրտ. միակամ ու միաճամուռ.
Զարկեցե՛՛ք բռնակալին. արմատախիլ արե՛՛ք.
Թուրքիան համայն կրակի տան,
Ու բռնկվի Բոսնիայից մինչև Արաբիա:

115 Էլ ինչե՞՛ք եմ հապաղում. ի՞նչ եմ սառել. մեռելի պես
Զարբե՛՛ք. մի եղբ (իրարու) հակառակորդ ու քնամի:
Ինչպե՞ս որ մեռ պապերը զազանի պես հարձակվում.
Ազատության համար իրենց կրակն էին նետում.
Մենք էլ այդպես. եղբայրե՛՛ք. եկե՛ք մեկին զինվե՛՛ք:
120 Եվ լուծր դառն ստրկության մեզանից բոքափնե՛ք:

Ռիգասը համոզված էր, որ եղբայրակիցների միասնական պայքարը հաղթանակ կբերի, կստեղծվի իր ծրագրած դեմոկրատական պետությունը՝

125 Մարդկությունը համայն բո՛ղ փրկվի այս փորձանքից,
Ազատ ապրենք, եղբայրե՛՛ք. աշխարհում:

Ինչպես նշվեց, հիմքը դեռ տպագրվելուց առաջ, իսկ առաջին և երկրորդ հրատարակությունից հետո առավել ևս, լայն տարածում էր գտել: Նույնիսկ անդրագետ հույն Լրիտասարդները հիմքը պարունակող բրոշյուրը կրում էին ծոցում և, պատահելով գրագետ որևէ մեկին, խնդրում էին կարդալ, որպեսզի կրկին անգամ, սրտի դողով ունկնդրեն նրա շիկացած տողերը, համակվեն արդարացի ցասումով: Հիանալի նրաժշտականության շնորհիվ հիմքը կատարվում էր ամեն մի խնջույքի ժամանակ, մուտք էր գործել հունական խրճիթները, երկրի հեռավոր դուռներն ու լեռնակիրճները: Այն իրոք դարձել էր բոլոր հույների ամենասիրած երգը, իրավամբ համարվում էր հունական մարսելիկայը: Նույնիսկ վկայություն կա, որ Կ. Պոլսում թուրք մինիստրներից ոմանր ստիպում էին հույն երգիչներին խնջույքի ժամանակ կատարել հիմքը՝ չիմանալով թե ինչի մասին է այն:

Ռիգասի հիմնի մասին ժամանակին հայտնի է դարձել նաև Բարձրագույն Դռանը: Սուլթանին ուղարկած մի հաղորդման մեջ Ալի փաշա Յանիագին, հենվելով իր որդու՝ Մուխտար փաշայի նամակների վրա, հաղորդել է, որ հույներն ապստամբության են նախապատրաստվում, որ Վլուդացիք սկսում են

²⁶ Խոսքը XVIII—XIX դդ. անցման ժամանակաշրջանի եվրոպական Թուրքիայում մղված պինված պայքարի մասին է: Այդ պայքարը ղլխավորողներից մեկի մասին է Ա. Ս. Պուլչինի «Կիբչալի» վիպակը (տե՛ս Ա. Ս. Պուլչինի, Երկեր, հ. 4, էջ 308—315):

կրգնել Թեսալացի Ռիգասի հունարեն թարգմանած մի երգը, որ մարսելիեզ են անվանում²⁷։

Ռիգասն իր գործունեությամբ, արժարժած հեղափոխական-դեմոկրատական գաղափարներով, նրա ստեղծած «Հետերիա» գաղտնի կազմակերպությունը, նրա մարտաշունչ «Ռազմական հիմնը» պատմական դեր են կատարել Հունաստանի ազատագրության գործում։ Ռիգասը կարողացել է ազատագրական պայքարի հանել հույն և բալկանյան ժողովուրդներին։ Նրա ստեղծած դիմադրության ղեկավարության գաղափարական-քաղաքական, մինչև անգամ կազմակերպական սկզբունքները ժառանգել է 1814 թ. Օդեսայում ստեղծված հանրաձայտ «Ֆիլիկի հետերիա» («Բարեկամական ընկերություն») ընդհատակյա մասսայական հեղափոխական գաղտնի կազմակերպությունը, որ յոթնամյա (1814—1821) իր գործունեությամբ նախապատրաստել ու հաղթականորեն սկզբնավորել է Հունաստանի ազատագրությունը սուլթանական լծից։ Հունական ազատագրական պատերազմի (1821—1829) բոլոր տարիներին օտար լծի դեմ դիմված պայքարի ելած բոլոր հույներին՝ Ալ. Իպսիլանտից ու մյուս ղեկավարներից սկսած մինչև վերջին հույն դիմադրող ու դյուցազուն սուլեցիները։ Կոռ մարտի էին նկատվում Ռիգասի «Ռազմական հիմնը» շուրթերին։ Իդուր. չէր, որ Հունաստանի ազատագրության պայքարով խանդավառված մեծ բանաստեղծն «Ապստամբի՛ր, օ՛ Հունաստան, ապստամբի՛ր» իր բանաստեղծություն մեջ գրում էր։

Ներսեսի ու աստվածների երկիրը
Խորտակել է ճորտական կապանքներն իր՝
Նրդելով բոցերում բռնված երգերը
Տիրտեյի, Բայրոնի ու Ռիգասի²⁸։

Տարօրինակ կլիներ, եթե հայությանն անծանոթ մնային Ռիգասի անունը և նրա հիմնը Կան վկայություններ այն մասին, որ հայ նավաբեռնորդների առանձին խմբեր եղել են «Ֆիլիկի հետերիայի» անդամներ։ Նրանք անշուշտ, ծանոթ էին Ռիգասի գաղափարներին, հիմնին։ Հավանաբար հայ մամուլի ու առանձին հրատարակությունների էջերում իր ժամանակին խոսվել է Ռիգասի և նրա հիմնի մասին։ Տակավին չհետադոտված այս կարևոր հարցը կարոտ է հատուկ քննության։ Այդ ուղղությամբ մեր կատարած որոշ պրպտումները ուշադրության արժանի տեղեկություններ են տալիս։

1877 թ., Բալկանյան երկրներում սլավոնների մղած ազատագրական պայքարի բուռն պահին և ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին «Փորձ» ամսագրի խմբագիր-հրատարակիչ Ա. Հովհաննիսյանը, պարբերականի երկրորդ համարում տեղավորել է «Հունաստանի անկախությունը» պատմական ընդարձակ ուրվագիծը²⁹։ Դրա հեղինակ՝ Ստ. Պալասանյանը, օգտվելով XIX դ. պատմության մասին Գերվինուսի աշխատությունից, շարադրել է Հունաստանի

²⁷ Կ ո ռ Ք ա թ ո լ դ ու, Նշվ. աշխ., էջ 51։ Բնորոշ է և այն, որ Ալի փաշան Ռիգասի «Ռազմական հիմնը» նույնացրել է հույականոր «Մարսելիեզի» հետ։

²⁸ А. С. Пушкин, Сочинения, 1949, стр. 152.

²⁹ «Փորձ», 1877/1878, № 2, էջ 163—229։ Հունաստանի անկախության, ինչպես նաև Ռիգասի մասին հայ մամուլում տպագրված նյութերի շարքում ուշադրվել է նաև «Արարատի» 1883 թ. 6-րդ և 7-րդ համարներում տպագրված «Հունաստանի ապստամբությունը և վերականգնումը» հոդվածը (էջ 229—239 և 263—298), ինչպես նաև Կ. Բարթոլդիի Նշվ. աշխ.։

XVIII և XIX դդ. պատմությունը, երկրում տիրող սոցիալ-քաղաքական վիճակը, թուրքական բռնապետության հարստահարություններն ու կամայականությունները, նկարագրել է ազգային-աղատագրական այն պայքարը, որ ի վերջո հանգեցրել է երկրի ազատագրությանը և անկախություն բերել հույն ժողովրդին:

Ինքնանպատակ չէ «Փորձի» (Ստ. Պալասանյանի) շարադրանքը: Նրա անսքող միտումն է ասմանյան լուծը թոթափած կամ ազատագրական պայքարի ելած ժողովուրդների օրինակով ու նրանց պատմական փորձով ոտքի հանել հայ ժողովրդին: Ուշինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել,— գրում է ամսագիրը. —որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը՝ քաղաքական անկախություն ձեռք բերելու»³⁰: Ամսագիրը նշում է սերբերի, հույների, իտալացիների և այլ ժողովուրդների անցած «այլևայլ ճանապարհները», խոստում նրանց գործադրած այն «զանազան միջոցների» մասին. որոնցով հասել են «իրանց դարևոր ցանկություններին»: «Ցույց տալ թե որքան հաստատակամություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել նոքա իրանց բաղձանքին հասնելու, մի քաղցր պարտականություն է համարում յուր համար մեր հանդեսը»:

Իր այդ «քաղցր պարտականությունը» կատարելիս «Փորձը» հայ ընթերցողներին ծանոթացրել է նաև Կոստանդին Ռիզասին, որին համարում է «հունական ազատագրության հայրը և առաջին նահատակը»: Ամսագիրն ուրվագծել է Ռիզասի գործունեությունը, տվել է նրա մարտիրոսության պատկերը, բերել է մահվանից առաջ նրա արտասանած կրակոտ խոսքերը, արձակ թարգմանություն մը քաղվածքներ է արել «Ռազմական հիմնից»՝ առանց մատնանշելու երկի անունը: «Փորձը» մասնավորապես բերել է Ռիզասի դիմումն՝ ուղղված պալիկարներին³¹. «Պալիկարներ՝, մի՞թե գեռ երկար ժամանակ առյուծների պես առանձնացած պիտի ապրեք կիրճերում, լեռնոտ ու ժայռոտ այրերում և անտառներում, զարհուրելի և գառն ստրկության մեջ, և պիտի փախչեք լույսից: Երկա՞ր ժամանակ անպաշտպան պիտի թողնեք ձեր եղբայրներին ու ծնողներին, ձեր հայրենիքը, ձեր բարեկամներին ու զավակներին, ձեր տուն ու տեղը: Հիշեցեք, որ ավելի լավ է մի ժամ աղատ ապրել, քան հազարավոր տարիներ անցկացնել ստրկության լծի և բռնակալի իշխանության տակ»³²:

Հայ ընթերցողներին անուղղակի հասցեագրված այս խոսքերը պետք է որ արձագանք գտնեին նրանց սրտերում և խոր համակրանքով տողորեին նրա անծանոթ հեղինակի նկատմամբ՝ մանավանդ որ հույն «եռանդուն երիտասարդները, ինչպես գրում է «Փորձը», ձեռք ձեռք ման էին ածում Ռիզասի ոտանավորները և նոցա հետևողությամբ հյուսված երգերը»: Հույն հայրենասերը «իր բոցավառ խոսքերով, ընդգծում է այնուհետև ամսագիրը, դեպի աղատություն հրավիրել էր ամենից առաջ» մարտատենչ հույներին, «ժողովրդի ստորին դասերին», որոնց մեջ «արդեն զարթնել էր ազգային հպարտության զգացմուն-

³⁰ Նույն տեղում, էջ 163:

³¹ Այդպես էին անվանում Հունաստանի դիմված մարտիկների ջոկատները թուրքական տիրապետության ժամանակ: Բառացի նշանակում է՝ կտրիճ, երիտասարդ:

³² «Փորձ», 1877/1878, № 2, էջ 183—184: Դա Ռիզասի հիմնի առաջին ութնյակի արձակ թարգմանությունն է (հմտ. «Французский ежегодник», 1963, стр. 340):

րը՝ հենց Ռիդասի և մյուսների ազատագրական կոչերի շնորհիվ: Քաղցր սյարսականություն՝ կատարող հանդեսը, ի դեպ, անց է կացնում նպատակադրված պոլիտիկա. նա: խոսում է Մահմուդ Բ սուլթանի ժամանաճարպիկ գորավար և քաղաքադեստ Ղուրշիդ փաշայի՝ մասին, որն ուղարկվել է ապստամբ հուլյների դեմ՝ խստություններ կամ քաղցրություններ՝ զինաթափ անելու: Հուլյները չեն խարվել և դիմակայել են փաշայի մեծաթիվ զորքին: Իսկ այդ փաշան հենց նա է, որ սլավոստուն թվականին Տավրոսի լեռները ներկել էր զելթունյի հայերի անմեղ արյունով և Բելլորագում ղժքախտ սերբերի գլուխներից բուրդեր էր կալմակը³³:

Ա. Հովհաննիսյանի հանդեսը չի բավարարվել Հունաստանի անկախության մասին տրված ուրվագծով: Այդտեղ խոսելով նաև հունական ազատագրական շարժման մյուս ականավոր գործիչ, գրող-գիտնական Աղամանտիոս Կորուիսի (1748—1833) մասին³⁴, «Փորձը» հիշյալ պատմական ուրվագծից անմիջապես հետո զետեղել է «Հուլյների պատերազմական երգը» խորագրով ընդարձակ բանասանդղություն-կոչը՝ այն վերագրելով «Ժամանակի հուլյն պտտղամախոս» Աղամանտիոս Կորուիսին³⁵: Իրականում, սակայն, հանգեսը ապարկել է հենց Ռիդասի հայտնի հիմնի փոխակերպված տարբերակը:

Բանն այն է, որ ուսու հեղափոխական թարգմանիչ-գրող Միխայիլ Միխայլովը³⁶, լուս հետադուրողների ենթագրության, 1859—1861 թթ. թարգմանել է Ռիդասի «Ռադական հիմնը», որը հրատարակվել է իր մահվանից հետո: Նույն մարտակոչը թարգմանել է ամբողջությամբ, բայց նպատակ ունենալով այն դարձնել հեղափոխական գեմոկրատիայի հիմնը, շեղվել է բնագրից և իր թարգմանությունը հարմարեցրել ուսական իրականությանը: Տաղանդավոր հրապարակախոս-բանաստեղծը այգպիսով ստեղծել է բնագրի հնչեղությունն ունիցող բոցաշունչ մի ստեղծագործություն, որը դասվել է ուսական հեղափոխական պոեզիայի լավագույն նմուշների շարքը: Խոսելով Մ. Միխայլովի թարգմանության մասին սովետական դրականագետ Պ. Ֆատեևը նկատում է, որ «այդ հիմնն արդարև կարելի է անվանել հեղափոխության հիմն, ոչ միայն Հունաստանում, այլ նաև Ռուսաստանում զինված ապստամբության հիմն»³⁷:

³³ Նույն տեղում, էջ 201:

³⁴ Ա. Կորուիսը ծնվել է Զմյուսնիայում, բայց կյանքի մեծ մասն անց է կացրել արտասահմանում, իսկ 1782-ից առնչել ընակություն է հաստատել Փարիզում, ստացել է բժշկության դոկտորի աստիճան, ղրաղվել է հունական կլասիկների թարգմանությամբ, նախածենել և իրագործել է «Հելլենական դրագարան» հսկայածավալ մատենաշարի հրատարակությունը: Ժամանակակիցները նրան անվանել են նոր Հունաստանի Սոկրատ: Մավալել է լուսավորչական գործունեություն, պայքարել եկեղեցու դեմ: Հանրահայտ են նրա «Ռադական երգերը», «Ռադական ահալանք» և այլ ստեղծագործություններ, որոնք ընդհատակյա տարածվում էին Հունաստանում:

³⁵ Տե՛ս «Փորձ», 1877/1878, № 2, էջ 230—234:

³⁶ Մ. Միխայլովը (1829—1865) վաթսուական թվականների հեղափոխական-գեմոկրատներից է: Տիրապետում էր մի շարք օտար լեզուների, այդ թվում հունարենին: Մտերիմ էր Զերինչևսկու, Շելլոնովների հետ, լոնդոնում այցելել է Գերցենին ու Օգարին, Փարիզում հանդիպել է «Բնականագիտական» հեղինակ էժ. Պոտինին: Վերադառնալով Ռուսաստան 1861 թ. ձերբակալվել է ու քստրովել Սիրիբ, որտեղ և մահացել է: Հանգես էր դալիս ժամանակի մամուլում, հրատարակել է մի շարք արձակ երկեր, լիրիկական բանաստեղծություններ: Թարգմանել է Կերանժին, Հայնին, Լոնգֆելդին և այլ գրողների:

³⁷ П. С. Фатеев, Михаил Михайлов—революционер, писатель, публицист, М., 1969, стр. 274.

ինչ-որ թյուրիմացության հետևանքով Ռիգասի «Ռազմական հիմնի» Միխայլովի կատարած թարգմանությունը հրատարակվել է իբրև Ա. Կորախսի ստեղծագործություն (հավանաբար թյուրիմացությունը տեղի է ունեցել միևնույն խառնվածքի ու իրար ժամանակակից երկու հույն հեղինակների ստեղծագործությունների վերնագրերի համանմանությունից)։ Թեև ռուս ընթերցողներին և ռուսումնասիրողներին Ռիգասը և նրա հիմնը հայտնի էին դեռևս դարակզրից³⁸, տեղի ունեցած թյուրիմացությունը գոյատևել է մինչև մեր օրերը³⁹։

Նույն թյուրիմացությունը, անշուշտ հենց Միխայլովի հետևությամբ, տեղ է գտել նաև հայ մամուլում։ Բայց ստեղծագործության հեղինակի շփոթությունից անկախ «Փորձի» զետեղած թարգմանությունը, որ կատարել է Գ. Բարխուդարյանը⁴⁰, հայ իրականության մեջ, ինչպես դա ազատագրական պայքարի էլած Հունաստանում էր, ղորեղ մարտակոչի հնչեղություն էր ստանում։ Թարգմանությունը կատարված է մեծ հմտությամբ և Մ. Միխայլովի փոխադրությանը լիակատար համապատասխանությամբ, եթե նկատի չառնենք մի ըն-

38 Ռիգասի հիմնն առաջին անգամ ռուսերեն թարգմանել և 1821 թ. հրատարակել է «Իլիականի» Նանրահայտ թարգմանիչ Ն. Գնեդիչը՝ «Вестник Европы» պարբերականում։

39 Հիմնի Մ. Միխայլովի կատարած թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել «Современник»-ի 1865 թ. 3-րդ համարում (էջ 97—102)։ Հեղինակային պատկանելիությունը մշտվել է Միխայլովի երկերի հինգհատորյակում (հ. 1, էջ 610—612)՝ 1951 թ.։

40 Բանաստեղծության ոչ սկզբում և ոչ էլ վերջում թարգմանիչը չի նշված, սակայն ամսագրի նյութերի ցանկում տպագրված է՝ «Թարգմ.» Գ. Բարխուդարյանի»։

Գեորգ Բարխուդարյանի (1833—1913) գործունեությունն ու ստեղծագործական դիմաստվերը պատշաճորեն չի ուսումնասիրված։ Դորպատում ուսումը հիվանդության պատճառով կիսատ թողնելով, նա վերադարձել է իր ծննդավայրը՝ Թիֆլիս և զբաղվել մանկավարժությամբ։ Աշխատակցել է «Մեղու Հայաստանիին», ապա «Հյուսիսսփայլին», իսկ 70—80-ականին՝ «Փորձին», «Լուսային», «Մուրճին»։ Հիմնականում կատարել է թարգմանություններ։ Անգլերենի ժողովածուն հրատարակվել է 1897 թ. (տե՛ս «Հյուսիսսփայլի» պոեզիան, կազմեց, կոմենտարիաները և առաջարկը գրեց Մ. Սադյան, 1956, էջ 163—166 և հետո, Մ. Մխիթարյան, «Հյուսիսսփայլ» ամսագիրը, 1958, էջ 156—157, Հայ գրականության պատմություն, հ. 2, 1962, էջ 407—408)։

Ռիգասի «Ռազմական հիմնի» թարգմանությամբ Գ. Բարխուդարյանի ստեղծագործական աշխարհայացքային շրջանակը մեծապես ընդարձակվում է։ Բնորոշ է, որ նա իր ստեղծագործություններից մեկում գրեթե բառացի կրկնում է Ռիգասին։

Լավ էր, որ ազատ մեռանեիք,

Քան ապրում եմ այժմ անյուր։

Գ. Բարխուդարյանի «Զորս հսկա» պոեմի այս երկրորդը, որ բաղված է նրա «Բանասահղություններ» ժողովածուից (էջ 73) սկզբնապես՝ «Հյուսիսսփայլում» (1861, № 9) տպագրվել է այսպես՝

Լավ էր ազատ մեռանեիք,

Քան ապրեիք այդպես ստույգ։

Այս խոսքերով է հայոց ազգի ազատության պաշտպան Հայկը դիմում իր սիրելի որդիներին։ Որ Գեորգ Բարխուդարյանի համար ազատագրական պոեզիային դիմելը պատահական երևույթ չէր, ցույց է տալիս նաև հունական թեմատիկայով Մյուլերի կրած «Ֆանարիոտ» բանաստեղծության թարգմանությունը (տե՛ս Գ. Բարխուդարյան, Բանաստեղծություններ, 1897, էջ 136—137)։

դարձուկ հատվածի կրճատումը⁴¹։ Ռիզասի հիմնը «Փորձի» էջերից հայերին ուղղված բացառիկ մարտակոչի բնույթ է ստացել։ Ահա հիմնի որոշ հատվածները՝ Գ. Բարխուդարյանի թարգմանությամբ.

Լավ է մի ժամ ազատ շնչել,
Քան ձիգ տարիներ
Խորն զերի ասյրել բանտում,
Կրել շղթաներ։
Ի՞նչ օգուտ է երկար կյանք,
Նոյ շղթայված եմ։
Նոյ ամեն ժամ բռնավորի
Մահ սյուրի սպասեմ...

... Խոյ լորրոկվեն մեր սրտերը
Կրակով սրբազան.
Նկե՛մ երգվեն սուրբ լսաչի վրա
Լինել միայն...

... Քանի շունչս բերանումս է,
Պիտի վրեժ առնիմ։
Մեր բշեմու ղունդերի վրա
Սուր ու նուր քալիմ։
Հայրենիս սլաշուսանելով
Լավ է քաշուրյամբ
Մենեիմ, քան քե կյանքս վրկեմ
Նշավակուրյամբ...

... Նկե՛մ կովենեմ, ո՛վ ճերտենեմ,
Ցույց տանեմ աշխարհիեմ,
Որ մենեմ նույնպես արժանի եմ
Պապերի վառիմ...

Ահա և հիմնի կրճատված բրջաբանը.

Գրեա՛նեմ, կործանե՛նեմ բռնությունը
Նվ վերադառնանեմ
Կովից-ազատ հայրենիքում
Վառենեմ ազատ կյանք։

Մ. Միխայլովի թարգմանության մեջ չեն հիշատակված այն բոլոր ժողովուրդները, և նրանց թվում նաև հայերն ու վրացիները, որոնց անմիջականորեն ուղղել էր իր խոսքը Ռիզասը⁴²։ Այդ պատճառով Գ. Բարխուդարյանի թարգմանության մեջ ևս չկան համապատասխան տողերը։

⁴¹ Ռիզասի հիմնի հայերեն և ռուսերեն թարգմանությունների համադրումից պարզվեց, որ Միխայլովի անքստի 107—160-րդ տողերը Բարխուդարյանի տեքստում չկան։ Բերես կրճատումը կատարվել է թարգմանական զմլարության պատճառով, թեև չի բացառվում, որ դա տեղի ունեցած լինի զրաքների յիշատակումից։

⁴² Մեր պրպտումներից պարզվեց, որ Ռիզասի հիմնի հրատարակված և ղանազան աշխատություններում մեջ բերված տեքստերն ունեն որոշ տարբերություններ։ Դրանցից մի քանիսում մասնավորապես հայերի փոխարեն նշված է «սերերը»։ Դա է ցույց տալիս այն տողացի թարգմանությունը, որ մեջ է բերվում Մ. Միխայլովի երկերի 1934 թ. հրատարակության, ապա և 1951 թ. ժողովածուի առաջին հատորի ծանոթագրություններում՝ հիմք ընդունելով 1824 թ. Փարիզում և 1835 թ. Լայպցիգում լույս տեսած զրքերը։ Ըստ երևույթին այս վերջին հրատարակություններում Ռիզասի հիմնը զետեղվել է ըստ ձեռագիր տեքստերի, որոնցում նման փոփոխություններ կատարելը լիովին հասկանալի է։ Այդպիսով Գ. Լ. Արշի հրատարակումը, սկզբնաղբյուրի նշանակություն է ստանում (տե՛ս М. И. Мухомов, Собр. соч., т. I, 1951, стр. 610—612)։

Ռիգասն ամենայն իրավամբ համարվում է օսմանյան լծի գեմ բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի գաղափարախոսը: Նա որոշիչ գեր է կատարել հունական ազգային-աղատագրական պայքարի հաղթական ծավալման գործում⁴³: Ազատագրական իր ծրագրում նա տեղ է տվել նաև օսմանյան լծի տակ գտնվող հայերին և իր կրակոտ խոսքն ուղղել է նրանց նույնպես: Իր էութամբ եզակի այդ նշանակալից երևույթն արժանի է հատուկ ուշադրության: Մյուս ժողովուրդների օրինակով սովթանական Թուրքիայի դեմ հայ ժողովրդին ոտքի հանելու գործում Ռիգասի սահմանագրությունը և պատմական մարտակոչն իրենց արժանի տեղն ունեն:

Այդ տեղն ավելի ձգրիտ որոշելու, ինչպես և նրա նշանակությունը լրիվ ըմբռնելու համար դեռևս հարկ է մանրակրկիտ հետազոտություն կատարել: Առնվազն անհրաժեշտ է պարզել հարցի երկու էական կողմը:

Նախ՝ Ռիգասի ապագա պետությունը ո՞րքան հայություն էր ընդգրկում: Ռիգասի սահմանագրության խորագիրն արդեն հուշում է, որ նրա պետությունը բացառությամբ Բոսնիայի ընդգրկում է համարյա ամբողջ եվրոպական Թուրքիան (Ռումելիա)՝ ներառյալ նաև Պելոպոնես թերակղզին (Մորեա), էգեյան ծովի կղզիները, թերևս նաև Կիպրոսը: Այդ սահմանների մեջ է մտնում նաև Փոքր Ասիան (Անատոլիա)՝ մոտ 1100 կմ. երկարությամբ և 400—650 կմ լայնությամբ (Պոնտական լեռներ, Տավրոս, Անատոլիական հարթավայր՝ Հայկական բարձրավանդակին հարող փեշերով):

Հայ գաղթականությունը Բալկանյան թերակղզում և հունական կղզիներում XVIII և XIX դդ., անշուշտ, բավականաչափ մեծ էր: Միայն մանրուկրկիտ հետազոտությունը կարող է ձգրիտ պատասխան տալ թե որքան էր այդ ընդարձակ տարածքում բնակվող հայերի թիվը, որոնց համար Ռիգասը մյուս ժողովուրդների հետ հավասարազոր իրավունքներ էր սահմանում:

Այնուհետև շատ կարևոր է պարզել, թե կոնկրետ ինչ մասնակցություն են ունեցել հայերը Ռիգասի և նրա զինակիցների ծավալած ընդհատակյա աշխատանքում, ի՞նչ արձագանք է գտել նրանց ծրագիրը բուն հայության շրջաններում: Որևէ որոշակի վկայություն այդ մասին տակավին հայտնի չէ: Հարցը հատուկ քննության առարկա դարձնելը, մեր կարծիքով, կլրացնի այդ բացը: Սեղ դեռևս հայտնի չեն Ռիգասի և նրա զինակիցների գործունեությանը վերաբերող բուն փաստաթղթերը, որոնք հրապարակ են հանվել վաղուց ի վեր⁴⁴: Դրա հետ միաժամանակ հայրենական պատմագրությունը, ինչպես նշվից, յուստաճորեն վեր չի հանել նրանց ծավալած պայքարը: Բայց այն փաստը, որ Ռիգասը իր սահմանագրությունում և մարտակոչում որոշակի տեղ ու դեր է

⁴³ Մեր օրերում ես Ռիգասի անունը և գաղափարները պայքարի են կոչում հույն երիտասարդ հայրենասերներին: Հունաստանում իշխանության գլուխ անցած սեղ դեղապետների դեմ պայքարող հակազիկատարական ընդհատակյա մի կազմակերպություն ստացել է «Ռիգաս Ֆերիոս» անվանումը: 1970 թ. դեկտեմբերին ձերբակալվել և այս տարվա օգոստոսին, երկարատև տանջաբնությունից ու դաժան կտանքներից հետո, նրա յոթ անգամները դատապարտվել են տխրահռչակ № 509 օրենքի հիման վրա, որ արգելում է կոմունիստական գործունեությունը: Ձերբակալվածներից մեկի՝ Կոստաս Կոստարակոսի բանտից զաղտնի ուղարկած նամակը վերջերս հրատարակվել է սովետական մամուլում («Комсомольская правда», 13. VIII. 1971):

⁴⁴ Ֆրանսիացի դիտնական է. Լեզրանը Ռիգասին նվիրված առաջին վավերագրերը (35 փաստաթուղթ) հրատարակել է 1892 թ.: Մի շարք այլ փաստաթղթեր, դարձյալ Ավստրիական արխիվներից, հրապարակ են և կեն 1930-ին:

հատկացրել նաև հայերին, ինքնըստինքյան, հաստատումն է այն բանի, որ հայության ղանգվածների հետ հույն հեղափոխականները որոշակի հույսեր էին կապում: Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ Ռիգասի գործն ու պայքարը ժառանգած «նիխիկի հետերիա» կազմակերպության մեջ էին ընդգրկվել, հավատարար, ոչ բիշ թվով հայեր, նույնիսկ աշխատավորական առանձին խմբեր:

Հետագա մանրակրկիտ ուսումնասիրությունները թերևս որոշակի կովաններ կտան հաստատելու հույն հեղափոխական-դեմոկրատ Ռիգասի և հայերի համագործակցությունը:

• М. Н. АКОПЯН

РИГАС, ЕГО ПРОГРАММА И АРМЯНЕ

Р е з ю м е

В истории греческого и армянского народов немало общих страниц. Видный греческий революционер-демократ, поэт Ригас Велестинлис (ок. 1757—1798), разработал программу свержения османского ига в Балканских странах и обратился с боевым призывом («Военный гимн») ко всем народам, томившимся под тяжелым игом Османской империи. В своем проекте конституции будущего свободного греческого государства Ригас наряду с греками и другими угнетенными народами предусмотрел равные гражданские права и демократическую свободу также для армян, проживающих в Греции и на прилегающих к ней островах. В своем боевом гимне, получившем широкое распространение еще при жизни поэта, Ригас призывал армянский народ в числе других народов встать на путь вооруженной борьбы против султанского господства.

Армянская общественная мысль интересовалась греческой революцией 1821 г., живо откликаясь на греческие события. Пламенный призыв — «Военный гимн» Ригаса был переведен с русского текста на армянский язык и издан в 1878 г. в журнале «Փորձ», причем авторство «Военного гимна» в армянском переводе (как и в русском издании, перевод М. М. Михайлова) было ошибочно приписано другому греческому общественному деятелю, писателю А. Кораису.